# ՓԱՐԶԱՒՔ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրիս միջոցով որ և իցէ մանաւանդ յայտարարութիւն ապել ավղը պէտք է վճարէ տունն 4 տառի համար 1 կոպէկ արծաթ։

Հրատարակվում է տունն չարաթ օր, մի մի թերթ, Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռուբլի։

ԺԲ· ՏԱՐԻ ՄԱՅԻՍԻ 31 1869 ԱՄԻ № 20.


## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սպանիա. spectatir լրագրին հաղորդում են հետևեալը կրօնական հարցի վերաբերութեամբ, որնոր այժմ քննում են Սպանիոում. Քաթոլիկ եկեղեցու թշնամիները այն երկրում տասյան մտաերումն անակնկալ օգնութիւն։ Աշակները, որոնք հարթում էին գետինը Մադրիդում գան ինկվիզիցիայի զոհերի գերեզմանները։ Այրած ոսկորները; կէս փտած մազերը և ինկվիզիցիայի դատաւորների ամարդութեան այլ հետքերը երևեցան աւելի ձարատար քան թէ ամենակերպ ձառերը և ազազակները։ Պ. կարազայի, Ջերմեռանդ հակառակորդը կրօնամոլութեան, ընտրեց այս դիւրը բնաբան իրան ձառին կորտէսների ժողովի մէջ և քաթոլիկ եկեղեցին անհերքելի հարուած տասյաւ Մադրիդում։ Սպանիացիք, ինչպես բոլոր հարաւաբնակ քաթոլիկները նայում են մահուան պատժի վերայ զարհուրանքով և ատելութեամբ և յանկարծ նոցա առաջներկայացնում են պարզ և անհերքելի ապացույցութիւններ, որ հարիւրաւոր թշուառներ մեռնելեն բոցերի մէջ միայն նորա համար, որ եղել են հերետիկոս կամ հրէայ։ Պետք է նկատել, որ յօդուտ կրօնական ազատութեան կորտէսների ժողովում ասվեցան շատ եռանդոտ ձառեր և որ ժողովը ուրախութեամբ ծափահարում էր նրան իր անդամներից, որնոր յայտնեց, թէ ժողովը չէ ընդունում իր վերայ յանդիմանութիւն անփոփոխ հաւատարմութեան համար դէպի քաթոլիկութիւնը և համաձայն չէ այսպիսի անունը իրան դովեստ համարելու։

9-ին մայիսի։ Զինուորական նախարար մարշալ Պրիմը, կորտէսների ժողովում, հետևեալ կերպով պատասխանեց Բալադէր պատգամաւորի հարցին, որնոր ակնարկութիւն արաւ այն վատաստիրական պետաւորութեան վերայ, որ վերաբերում են Պրիմին։

„Ինձ ամենևին չէ զարմացնում այն, որ շատերը պարապած են իմ անձնաւորութեամբս, այս ամէն հասարակական գործատասար անձանց ձակատագիրն է, որոնց մէջ են և նախարարներն։ Ինձմով վաղուց արդէն պարապած են, սեպհականելով ինձ մեկը միւսից աւելի անձոռնի մաքեր։ Մի քանի ամիս առաջ հաստատում էին, որ զինուորական նախարարը դիտաւորութիւն ունի Աստուրիայի իշխանի հաստատութիւնը Սպանիայի գահի վերայ։ Ես երեք անդամ պատիւ ունեցայ այս գահլիճում կրկնելու „երբէք“ և „անկարելի է“ խօսքերը, որոնք սոսկացին լսելու այս լուրերը։ Բայց այժմ կրկին յարձակեցան իմ վերայ, հաւատացնելով, որ ես միացել եմ հասարակապետական փաքրաթիւ խմբի հետ և ունիմ ձեռքերում միջոցներ, որ բարցելոնում հասարակապետութիւն հրատարակեմ։ Եւ իբրև թէ այտեղից են ծագում բարցելոնում անկարգութիւնները, որոնց վերայ ակնարկում է պ. Բալադէրը։ Սրանով չբաւականացան, այլ հնարեցին առաւել զարմանալի բաներ։ Ինձ վերաբերեցին ամենից փառասիրական դիտաւորութիւններ. խօսում էին, որ ես կամենում եմ ինձ ոչ թէ հասարակապետութեան նախագահ հրատարակել, այլ Սպանիայի թագաւոր։ Թող հասարակապետական կուսակցութեան անդամները յայտնեն, թէ ես եղել եմ արդեօք երբ և իցէ նոցա դիտաւորութիւններին համակից։ Միւս կողմից այս ժողովում ներկայ են մի քանի պեներաներ, իմ ընկերները, որոնց չէի կարող նշկահել, եթէ ես կամենում լինել Սպանիայի թագաւոր լինել։ Ժամանակը և հանգամանքները կ'ապացուցանեն, որ ես փառասէր չեմ և ոչ մի շահասէր դիտաւորութիւն չունիմ, բոլորը, ինչ որ ես ցանկանում եմ և դէպի ինչ որ ես բոլորը ջրութեամբս ձգտում եմ—այն է հաստատուն

կարգի հաստատութիւնը իմ հայրենիքումս և ազատութեան ապահովութիւնը:

Տաճկաստան. Ահա պատճէնը ազդայնութեանց մասին տուած նոր օրէնքի, որնոր այնքան անբաւականութիւն պարթեւցրեց Տաճկաստանի բնակիչներից կէսի մէջ և որով մերժվում է օտար ուերութեանց տուաջվան ազդեցութիւնը Բալկանի թերակղզու բնակիչների վերայ: Յօդ. 1) Ամէն մարդ, որ օսմանցի հայրից և օսմանցի մայրից է ծնած կամ միայն օսմանցի հայրից, է օսմանեան հպատակ: Յօդ. 2) Ամէն մարդ, որ Օսմանեան երկրում ծնած է օտար ծնողներից, կարող է իր կատարելահասակ լինելից յետ երեք տարուան միջոցում պահանջել իր համար օսմանեան հպատակի կոչում: Յօդ. 3) Իւրաքանչիւր կատարելահասակ օտարական, որնոր հինգ տարի շարունակ կ'բնակի Օսմանեան կայսերութեան մէջ, կարող է ստանալ օսմանեան ազդայնութիւն, ուղղելով իր խնդիրը այս մասին արտաքին գործոց նախարարին անմիջապէս կամ որևիցէ անձնի միջնորդութեամբ: Յօդ. 4) Կայսերական կառավարութիւնը առանձին դէպքերումը կարող է շնորհել օսմանեան ազդայնութիւն օտարականին, որնոր առանց վերոյիշեալ յօդուածի մէջ ցոյց տրված պայմանները կատարելու, կ'ճանաչվի արժանի այսպիսի առանձնաշնորհութեան: Յօդ. 5) Օսմանեան հպատակը, որ ընդունել է օտար ազդայնութիւն, կայսերական կառավարութեան որոշմամբը, համարվում է օտար հպատակ և նորա հետ պէտք է վարվիլ, ինչպէս կ'վայելէ այնպիսինին, իսկ եթէ ընդ հակառակն նա կ'ընդունի օտար հպատակութիւն, առանց նախընթաց որոշման կայսերական կառավարութեան, նորա հպատակութեան փոփոխութիւնը անընդունելի կ'լինի և նա կ'համարվի առաջվան պէս Օսմանեան հպատակ և ամէն. դէպքերում կ'վարվին նորա հետ ինչպէս այսպիսւոյ հետ: Ոչ մի օսմանեան հպատակ, ոչ մէկ կերպով չէ կարող օտար հպատակութիւն ընդունել, առանց սորա համար հրաման ստանալու կայսերական բարձրագոյն հրովարտակի հիման վերայ: Յօդ. 6) Կայսերական կառավարութիւնը կարող է յայտնել զրկուած օսմանեան ազդայնութիւնից իւրաքանչիւր օսմանեան հպատակին, որնոր կ'ընդունէ օտար հպատակութիւն օտար երկիրներում, կամ մտել է օտար ուերութեան զինուորական ծառայութեան մէջ, առանց իր թագաւորի որոշմանը և վճռին: Այս դէպքում օսմանեան հպատակի կոչումը առաջ կ'բերէ արդելումն նորա համար յետ դառնալու օսմանեան երկիրը, և կ'կորցնէ իր հպատակութեան իրաւունքը: Յօդ. 7) Օսմանցի կինը, որնոր ամուսնացած է օտարականի հետ, կարող է, եթէ այրեա նայ, դառնալ օսմանեան հպատակ, եթէ միայն իր մարդու մահից յետ երեք տարուան միջոցում կ'յայտնէ իր այն ցանկութիւնը: Այս կարգադրութիւնը կ'վերաբերի միայն նորա անձնաւորութեանը. իսկ նորա կայքը կ'ենթարկվի ընդհանուր օրէնքներին և կարգադրութիւններին, որոնք վերաբերումն այս հանդամանքին: Յօդ. 8) Մի օտար հպատակութիւն ընդունած կամ իր ազդայնութիւնը կորցրած օսմանեան հպատակի երեխան, եթէ լինի սա մինչև անդամ անչափահաս, չէ ենթարկվում իր հօր վճակին և ճանում է օսմանեան հպատակ: Օսմանեան հպատակութիւն ընդունող օտարականի որդին, եթէ մինչև անդամ անչափահաս լինի, չէ ենթարկվում իր հօր վճակին և ճանում է օտարական: Յօդ. 9) Իւրաքանչիւր անձն, որնոր բնակում է օսմանեան երկրում, համարվում է օսմանեան հպատակ և նորա հետ կ'վարվին ինչպէս այնպիսինի հետ մինչև որ կ'ապացուցվի նորա օտար հպատակութիւնը օրինաւորեալ կարգով: Տուած է 6-ին շեվալի 1285 ամի հէջրայի (19-ին փետրվարի 1869 ամի):

## Ա Զ Գ Ա Յ Ի Ն:

—

. . . ԽՄԲԱԳԻՐ

## ,,Մեղու Հայաստանի,,

ԼՐԱԳՐԻ:

—

Իւրաքանչիւր ընթերցասիրի՝ որպէս և իմ յօդուածումս նշմարած կարծիքը,— թէ սխալ, և թէ ուղիղ, եթէ չհասարականայ, կարծեմ աստ անդ մարմնանալուց, սովորական լինելուց, և տարրանալուց զկնի, զայն հասարակութեան միջից ջնջել, անյայտացնելն շատ դժուարութեամբ պիտի լինի, որի համար մեր նախնիներն (1) ոչ սակաւ քըրտունք թափելով անչափ գերիմաստ և ուղղահայեաց գաղափարներ թողած են աշխարհիս երեսին, ուստի մենք Հայերս և նոյն գաղափարաց ուղղութեան ընթացքը անկորուստ պահպանելու աղագաւ՝ պարտաւոր ենք ամէն մի գիտութեան ասպարէզ մտած գրուածոց մէջ նկատած երկբայական միաքն օրագիրների և ամսագիրների միջոցաւ՝ չէ թէ նախանձու կրքից դրդուած. այլ իբրև անդամ ու խորհրդակից նոյն յօդուածի հեղինակի նպատակին՝ սիրով յայտնել.—եթէ սխալ, հեղինակին ուղղութիւն ու զգուշութիւն. եթէ ուղիղ, կարծիքս ևոր մտաց անդորրութիւն, որ բանը պարզուի, ուղղահաւսութիւն թագաւորէ, որովհետև ինչպէս փոքրիկ խմորն ամենայն զանգուած կարէ խմորել (որպէս տեղումս ականատես եմ) այնպէս և մի բիծ մեծամեծ գրուածներ կարատաւորէ, ոչ թէ՝ միայն ինքն իրան, այլ հին ամբիւնապատ հրդեհներ նոր՝ի նոր կարծարծէ ու կբորբոքէ, խաղաղութեան մէջ վրդովմունք կձգէ, չեղած իրողութիւնը իբրև եղեալ հաչակելով, որով գրեթէ շատ հաստատ մտքեր իրանց ուղիղ նպատակէն կթիւրէ ու կդլորէ վայր: Թէև շատերը այդ միտքը՝ բարւոք դատաղութեան տէր մարդոց կարգում կդասեն, բայց ամէն խելացի, ամէն մի երկրի քաղաքի կամ դիւղի հասարակութեան տեղական սովորութեան, կամ ժամանակի պահանջման համեմատ պիտի խօսի ու գրէ, եթէ ոչ ջանքն՝ի զուր կ'ելնէ, վասն զի նկատուած է տեղական հասարակ ու բնական բառերով երկու խօսքն աւելի է ներգործում խաստատին, քան թէ անհասկանալի պերճ առնաբանութիւնն, վասն որոյ մեր ազգային խնդիրների մէջ խօսակցութեանց ու գրուածոց նպատակն ազգասիրութեան և լուսաւորութեան համար պիտի լինի, ա. պարզ ու որոշ, բ. քաղցր համոզմունք, գ. ներողամտութիւն, ու բարի նախանձ:

---

(1) Խօսքս նոցա վերայ չէ, որոնց եսակատնութեան սերմերից առաջացած փուչերի խոխոջ գարձած փուչին ծակոտել է մինչև այժմ, ու պիտի ծակոտի հայերիս սիրտ ու հոգին:

Ամենայարդելի բարեկամ, իմ նպատակս այն չէր, որ մէկին գովե՛մ և մէկին պախարակեմ, ամենևին ոչ. այլ այն հրատարակուած յօդուածի մէջ ձշմարիտ իրողութիւն ստութեան վարագուրաւ առագաստեալ լինելն ձեզ իմացնելով գրութիւնս խմբագրութեանդ էի յղել, որ „երկխմբեան“ ազգօգուտ խորհրդակցութեանց մինը՝ գոնէ սթափի, ոգևորվի ու որպէս և իսկ մի ընթացք սանայ, իսկ յօդուածիս ցարդ և աչքեր կապասէն,—թէպէտ այպէս. բայց ես բնաւ երբէք չէի տրտում, (ահա ժամանակը՝ ինձ, և իմ զրչիս արդարացրուց), որովհետև բանը՝ առանց եզրակացութիւն սանալն—էլ զիտէի, որ ընդհանուրի օգտին ծառայողը՝ անշուշտ՝ կամ ազգասիրական եռանդ պիտի ունենայ, կամ . . . ակնկալութիւն . . . նա ոչ այդ, և ոչ այն ունէր, ուրեմն հետևանքն ո՛ւր պիտի եղերէր, եթէ ոչ ուր գուշակել էի առաջուց:

Պ. խմբագիր, տեղւոյս հասարակութեան ուսումնասիրութեան վրայով առանց ածականի ու գոյականի լուութեամբ անցնելս պաշտպանութիւն էիք կարծել, ոչ. ես չէի պաշտպանել, այլ սուր ու սլաքի դէմ կանգնելու կարողութիւն չունէի, վասն որոյ լռեցի: Վասն զի, գիտէի որ, եթէ շատ մտածէ բայ 'ի հնութեան յարգող, և էֆիմերդէի խունկ ծխողից, ոչ ինչ չէի կարող գրչի տակ ձգել, որն որ աւետարանի ընթերցանութեան տեղ, մի ժամագիրք քայքայուած, կամ նոյայ տապանից մնայած էֆիմերդէ, քրիստոնէական վարդապետութեան փոխանակ, հնամաշ դարձ ծառայի՝ գրքոյկ վերառած բերում ուսումնարան, իրա մատղաշ մանուկն էլ հետը. 'ի հարկէ ուսուցչի բացատրութիւնն է լսում այնտեղ. բայց, ի՞նչ պատասխան, դ—է՛հ տէրտէր չամ անիլու, վարդապետ չամ անիլու, մին թէհսրով եօլայ տար մինչրու առուաւուրի հետապ սովրելին“. թէև զանազան փաստերով ուսման օգուտն և արգասիքն բացատրում ու դնում է նորա առաջին դասատուն, միևնոյն պատասխանն է տանում: Եթէ հազար անգամ կրկնուի այնպիսւոյ առաջ թէ՝ եթէ վարդապետին և քահանային միայն Հայկական լեզուն լաւ իմանալն, հովուական պարտաւորութեան մէջ ներկուտ լինելն, և հասարակութեան մէջ համեմիչ աղ լինելն է հարկաւոր, իսկ վաճառականին ամենատեսակ ուսումն, լեզուագիտութիւն առևտուրի միջոց, զանազան ազգերի հետ խօսել, աշխարհագրութիւն ճանապարհորդութեան հմտութեան համար, թուաբանութիւն և այլն. դարձեալ խօսող ձայնը „անապատի բարբառոյ ձայն կլինի“: Ուրեմն լաւ է լռել ու համբերել մինչև ժամանակն, եթէ ոչ ասողն էլ Մովսէս մարգարէի պէս Աւետեաց երկրի տեսութիւնից կզրկուի. այսքանս այս անգամ հերքի է:

Գ. Տէր Բողպասոլեան:

Ի 10 Մայիսի 1869 ամի.
'Ի Շամախի:

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

### Յօրագրութեանց Սիմօղի.

—

Փետր:—Էջմիածնայ գաւառի Դեչլու գեղջ ծխական յովհաննէս քահանայն. իր սուրբ կոչման հակառակ ընթացից մէջ գըտնուած և քանիցս խրատ ու յանդիմանութիւն բազմաց, 'ի վերջոյ իսպառ զրկեցաւ քահանայական կարգէն. և հարկատուաց կարգը համարուելոյ աղագաւ քաղաքական իշխանութեան տնօրէնութեանը յանձնուեցաւ:

---

Մարտ.—Արժ. Սուքիաս վարդապետն Պարզևաց, որ Տփղիսայ Հայոց կոնսիստօրիայի անդամ էր, Ախալցխոյ քաղաքին յաջորդ նշանակեցաւ 'ի տեղի Մկրտիչ եպիսկոպոսի Բաբաեանց:

---

## Հայկական Թատրոն Երևան:

Հետևեալը, զոր Երևանայ մեր թղթակիցը Արտատայ անցեալ մարտ ամսագրոյ մէջ հրատարակել խնդրած էր. արդէն մեր թերթից մամլոյ յանձնուած գանուելոյն առթիւ, պարտաւորվեցանք ներկայ ամսագրով հաղորդել մեր սիրելի Ազգայնոց:

„Անցեալ փետր. ամսոյ 16, 25 և 28 Երևանայ քաղաքիս Հայոց Ջերմեռանդ խումբը՝ հոգացողութեամբ և վերատեսչութեամբ պ. Սողոմոնի Աբրահամեան Ապամելիքեանց Տփղիսեցւոյ՝ յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս՝ երկու անգամ „ՇՈՒՇԱՆԻԿ“ ողբերգութիւնը (երկրորդը ըստ խնդրանաց և փափագանաց ժողովրդեան ներկայանալու պատուոյն և համակրութեան արժանացաւ), և մի անգամ „Երուանդ Բ.-ը“ Հայոց թեմական դպրոցի դահլեճի մէջ պատրաստուած թատրոնական բեմի վերայ՝ առաւել քան զկարծիս՝ յաջող և սրտաշարժ ներկայացոյց: Զոր նաև սիրտ շարունակէ զինի Ս. Զաւակին վերոյիշեալ նպատակաւ (*):

Յիշեալ ներկայացմանց մէջ առաւել աշխոյժ և ըստ արժանւոյն ներկայացուցին իւրեանց դերերը պ. պ. Սիմէօն վարժապետ Փիլիպպոսեանց, Նահապետ Տէր Յովակիմեանց և Նահապետ Աթանասեանց, նոյնպէս և համեստափայլ օրիորդ Եղիսաբեթ Ղօրղանեանց, որ առաջինը եղած է Երևանայ Հայ տիկնայց և օրիորդաց մէջ թատրոնական բեմի վերայ հանդիսացող, ներկայացնելով „Շուշանիկի“ դերը:

Ուստի համայն հանդիսականաց հետ մեծաւ ուրախութեամբ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը, որպէս քաղաքիս Ջերմեռանդ Հայ խմբին և պ. Աբամելիքեանցին, նոյնպէս և ամենայն ազգասէր դերասանաց և դերասանուհւոյն:

Իսկ ես մեծայոյս և ուրախ եմ՝ թէ Երևան քաղաքիս համայն Հայերը այս միջոցաւ ևս ոչ միայն պիտի ծանօթանան Ազգային անցից, այլ և նիւթականապէս օժանդակ պիտի լինին ըստ ազգասիրական զգացմանց՝ Հայոց երկսեռ դպրոցաց ազատաբայլ զարգացման և յառաջադիմութեան, բարի օրինակ հանդիսանալով մեր Ազգայնոց“:

---

(*) Առ այժմ այս երկաք անգամի ներկայացմունքը, որ գումարից 600 մանէթի չափ, գրեթէ թատրոնական տեսարանի և այլն պարագայից բոլոր ծախքերը վճարեց, զոր արած էր առանց տոկոսաց Երևանցի պ. Մկրտիչ Յովհաննիսեանց: Եւ յետ այսորիկ ներկայացմանց արդիւնքները պիտի մնան բոլորովին յօգուտ երկսեռ դպրոցաց Հայոց քաղաքիս:

Տաճօղ. Նամակագրին:

Կարս.—Ինչպէս, որ արդէն Գօլոյ Ազգային լրագրաց միջոցաւ տեղեկացած եմք, նոյնպէս կարուց մեր թղթակիցը կը հաղորդէ մեզ, թէ՝ Տաճկաստանի մէջ պապական Հայ կղերը մեծ ձիգով և վերջին շնչով կը ջանայ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ առ պաշտօնեայս՝ Արք եպիսկոպոսունս՝ եպիսկոպոսունս և վարդապետս և առ իշխանազուն աշխարհականս անգամ ս. Պապին հրաւիրագրին օրինակները առանձին առանձին դրութեանց մէջ ներփակեալ յղելով, գրաւել գնոսա, որպէս զի ներկայ տարւոյ դեկտեմբերին մէջ ի Հռոմ գումարելիք ժողովքին ներկայ բարեհաճին:

Այսպիսի մի գրութիւն հանդերձ օրինակաւ հրաւիրագրի պապին, նաև առ շնորհափայլ Դրիգորիս վարդապետ կարուց վիճակին բարեգէտ Առաջնորդն ուղղուած լինելով ի կողմանէ Արգվանիոյ գերապայծառ եպիսկոպոսին, և նորին Արժանապատուութիւնը զարժանին պատասխանը չզլացած լինելով, օրինակները մեզ խրկած է մեր Թղթակիցը, զորս կը հրատարակեմք:

Այս առթիւ աւելորդ է ասել, որ պապական կղերաց այսպիսի գործ ջանից և արբեռւթեանց արդիւնքը՝ ուրիշ ոչինչ անհնար է ծնանիլ, բայց եթէ՝ միևնոյն հայրենեաց արդւոյ՝ արեւակից եղբարց, Հայ ազգի մէջ հերձեալ և անջատեալ մասանց առիթքը փոխանակ բնաջինջ բառնալոյ և կրկին ազգային ոգւով ի մի սիրտ և ի մի սէր միացընելոյ, ընդ հակառակն՝ առաւել և առաւել ոդբալի գիտութեանց և անմիաբանութեան ասպարէզ բանալ, զոր չեմք կարող առանց մեծ և խորին ցաւ ու կսկիծ զգալու ի սիրտ և ի հոգի՝ նկատել այսպիսի գործ և ընդունայն աշխատութիւնքը:

Վասն զի մեք կ'ըղձամք և ակընդէտ կ'սպասեմք, որ մեր սիրելի ազգայինքը՝ պապական հայ կղերը և հայրենասէր ժողովուրդը՝ մոռանալով ինչ որ յարդ ժամանակի պառն բերմունքներէ պատահած ու անցած են, և գիտնալով, որ անհետացած են այնպիսի դարերն ևս, և ազգային ոգւով զգալով միասը՝ զգուշանան ինքեանց, որ օտարութեան փարախը ընթանալով, ան՝ կը հեռանան Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Ազգի նախնի սրբազան հարց և բարենախանձ ու պանծալի քաջարանց շաւիղներէ՝ ի կորուստ անուան Հայ Ազգութեան:

---

Պատճէն նամակի Արգուինոյ Եպիսկոպոսին Հայ Հռոմէականաց.

Գերապայծ— Տեառնդ ծնդպ.

Զհռովմէական սրբազան պապի գհրաման՝ ի գործ դնել կամեցեալ մեր, ձեռնամուխ լինիմք փանաքի գրութեամբս, իրազեկ առնել Գերապատիւ Տեառնդ զսիրասունչ հրաւէրն Սրբազան քահանայապետին մերոյ Պիոսի ինն երորդի, ի տիեզերական յընդհանուր ժողովն, զոր ունի գումարել ի Հռովմ յամի հազար ութ հարիւր վաթսուն իններորդի. և յինն յամենայն դեկտեմբերի. որպէս և ծանուցանէ յիւր հրաւիրական տետրակն:

Արդ նոյն ինքն ծայրագոյն գահանայապետս կամելով տալ գհրաւէրն և միանգամայն սփռել գհրաւիրական տետրակն ընդ ամենայն քրիստոնեայ եպիսկոպոսունս և առաջնորդս, մեզ պատուէր հրամանի տուեալ է ի միմաց իւրոյ վեհափառութեան՝ զի ընծայեսցուք իւրաքանչիւր եպիսկոպոսաց և Առաջնորդաց, և իշխանազուն աշխարհականաց անգամ, որք գտանին մերոյ թեմական վիճակին, թէ համազգի իցեն և թէ օտարազգի: Ահա և մեք փութամբ զնորայն պատուէր կատարել, առ Գերապատուութիւնդ առաքելով զնորին ծայրագոյն գահանայապետին զթուղթն հրաւիրանաց՝ զետաղերէնն և զնորին հարազատ զթարգմանութիւն ի հայ բարբառ:

---

Սպասելով դարձի պատասխանին ամենայն սիրով Գերապատուութեանդ

Խ. Ծ. Ա. վ. Հալաճեան Եպիսկոպոս
Արգուինոյ և այլն:

29 յունվ. 1869

Եպիսկոպոսարանէն:

---

Պատճէն պատասխանւոյ Առաջնորդին Լատուց առ Գերապայծառն Արգուինոյ.

Գերապայծառ Տեառնդ ծնդպ է ծեր.

Այս օրերուս մեր անուան ուղղուած հասցեիս նամակ մը առինք, և ինչպէս տեղէ մը կամ նամակը տէր եղողը կը բանայ, այնպէս ալ մենք առանց ուսկից կամ ինչ ըլլալը գիտնալու բացինք. բայց երբ տեսանք, որ Ձեր Գերապայծառութեան ստորագրեալ յատուկ մէկ նամակաւը Հռոմի ժողովին հրաւիրանաց հայերէն և իտալերէն տետրակներն էին, և հայերէն վրայի մակագիրը «Առ ամենայն Եպիսկոպոսունս արևելածէս եկեղեցեաց, որք Առաքելապետական Աթոռոյն հետ հաղորդակցութիւն չունին» էր գրուած. այս օրինակ հրաւէր մը շարժեց մեր զարմանքը երիւք աւելի զի նախ եպիսկոպոսացն պատկառելի Աստիճանին վիճակաւորելոց ըլլալուն մեզ վերաբերութիւն չունէր: Երկրորդ հաղորդակցութիւն չունենալնիս յայտնի եղած ատեն՝ հակառակ մտածելի տետրակներ մեզ կը հաղորդուէր թերևս Առաքելոյն խօսքին հաստատութիւն է. որ կըսէ «Քանզի զինչ բաժին կայ և այլն»: Եւ երկրորդ՝ մինչեւ բոլոր աշխարհի յայտնեալ ճշմարտութիւն մ'է, որ չեմ կարծեր թէ Հռօմ անգիտացած ըլլայ թէ մեք Հայաստանեայցս Առաքելական և ուղղափառ ս. Եկեղեցւոյ պաշտօնեայքս ունիմք մեզ Սրբազան Գլուխ մը՝ վեհափառ Հայրապետ մը՝ ամենայն Հայոց Կաթողիկոս մը, որոյ իրաւասութեան ներքոյ միայն կը գտնուինք ի հոգևորս, թողում ասել թէ Օսմանեան հողի վրայ գտնուողներս ունիմք նաև Կ. Պօլսոյ Ս. Պատրիարք մը. ուրեմն մեզ անդամոց որոշ որոշ հռօմէն ճանաչումը առանց մեր Ս. Գլխոյ ճանաչման, մեզի պատիւ չբերելէն զատ, մեր ս. Եկեղեցւոյ մէջ ունեցած՝ դասակարգութեանցս ալ ուրիշ կերպարանք մը կուտայ, զոր կը պատկառիմ ասել: Ուստի քանի որ իմ Սրբազան Գլուխ՝ այն է Սուրբ Էջմիածնայ Վեհափառ և Սրբազնասուրբ Հայրապետէն չունիմ հրաւէր և հրաման մը, որ ի Նորին Վեհափառութենէ միայն կըլլան մեզ Հայաստանեայցս Եկեղեցւոյ պաշտօնէից ամենայն հրաւէրք և հրամանք ի պաշտօնէ ուղղակի: և կամ Նորին Վեհա-

փառութեան հրամանաւ ի Սրբազան պատրիարքէն Կ. Պոլսոյ. և քանի որ Ձեր գերապայծառութենէն եկածը այսպէս չէր, բնական էր որ ընդունելութիւն չէր կրնար գտնալ մեզմէ, զորս ծանուցանել պարտ ինձ համարելով: Մնամ Ձերումդ գերապայծառութեան բարեացակամ:

Գ. Վ. Առաջնորդ Լեհաստէն կողմանց:

18 փետր. 1869 (Արտրատ):

Առաջնորդարան Հայոց
ի Կարս:

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:

—

## ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

### ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

### ԵՐԵԽԱՆՑ ՎԵՐԱՅ:

—

Յայտնի բան է, որ երեխան՝ նախքան իր գպրոց մտնելը մինչև 7-ը տարին, կամ 3—4 տարին ինչպես այժմ հիմնուած «Էրէխայական պարկեշտներ» անունով գպրոցներում ընդունում են, մնում է տան: Ուրեմն երեխան նախ առաջ մեծանում է իր տանը, իր ծնողաց մօտ, իր ներդաստանում: Այդտեղ երեխի մէջ հիմք են առնում բոլոր այն սովորութիւնները, այն վեր-կենալ նստելը, այն զգացմունքները և մի խօսքով այն բոլորը ինչ որ երեխայի ծնողներն են անում: Այս տեղից պարզ երևում է, և եթէ սորա վերայ աւելացնենք պարզացնելու համար երևելի մանկավարժ Պէստալոցիի խօսքերը, թէ «էրէխան ի-ր ընաւորութիւնը (сущность характера) ստանում է ի-ր ծնողներից», որ եթէ ծնողները լաւ են, պարզ և խորը հասկանում են դաստիարակութեան նշանակութիւնը, օրինաւոր կրթուած են, հետևապէս նոցա երեխաներն էլ բարեկրթի, ազնիւ, ճշմարիտ, պարզ են լայնն. իսկ եթէ ծնողները կրթութեամբ որպիսիներից, ծնօղները վատ են՝ հարբեցող են, ուշունց տուողներ են, անառակ են, ափեղփեղ խօսող են, օրինաւոր կրթութիւն չունին, չեն հասկանում դաստիարակութեան պահանջողութիւնները լայն լայն. հետևապէս նոցա զաւակներն էլ այդ արատութիւններով են մեծանում և նոցա բնաւորութեան մէջ մանում է այդ բոլոր պակասութիւնների սերմն: Եւ որովհետև մեր կեանքում երեխաները ամէն օր հէնց տանն են ճնում մօտ օտ, իսկ հայրը գնում է ամբողջ օրը իւր գործքով փող աշխատելու ընտանիքը պահելու համար. այս պատճառաւ էլ մօր ազդեցութիւնը աւելի է լինում նոցա զաւակների վերայ, քան թէ հօր ազդեցութիւնը: Ուրեմն եթէ մայրը օրինաւոր կրթուած է և դաստիարակված, մի խօսքով որ ասում են օրինաւոր մայր է, անշուշտ և նոցա զաւակներն էլ արժանաւոր երեխաներ և վերջը ազնիւ մարդիկ կը լինին: Իսկ եթէ մօր մէջը այդ արժանաւորութիւնները չըկան, հետևապէս և զաւակները զրկվում են ամենայն լաւ բանից, ամենայն բարի բանից լայն: Հէնց սորա համար է, որ այժմ մեր բոլոր հայկական լրագրներըը անդադար բողոքում են և քարոզում, թէ լաւ մայրեր պատրաստեք, օրինաւոր դաստիարակներ մեր աղջկերանցը, ուսուցիչներ բաց անենք նոցա համար, լաւ ուսում տանք մեր աղջկերանց, որ վերջը լաւ մայրեր դառնան:

Ահա, ինչ է ասուած գրքում 1), որտեղից ես քաղում եմ այս խօսքերը:

«Եթէ երեխան իւր ծնօղներից սկզբում «վատ դաստիարակութիւն է ստացել, նա «եթէ վերջը 10 հատ լաւ գպրոցներում էլ «լինի. այսուամենայնիւ նա լաւ մարդ չի «կարող դուրս գալ: Այդպիսի երեխայն կա«րող է լաւ գպրոցում և վերջը լաւ համալ«սարանում հասնել մինչև այն տեղը, որ «կարող կը լինի ճարտար խօսել, ամենայն «տեղ կը յայտնի բարձր և ազնիւ մտքեր, «բայց նորա զգացմունքները ձգելիս կը լինին «նորան դէպի հակառակ կողմը. հէնց սա«ռաջի փորձի մէջ զգացումները կը յաղ«թեն նորա գիտակցութեանը (сознание) և

1) Дѣтск. садъ, 1868 г. Мартъ и Апрѣлъ ст 122.

«նա այն ժամանակը կանի բարոյական յան«ցանքներ մինը միւսից յետ. եթէ այդ «մարդը պարզ համոզմանց տէր է, այն ժա«մանակը նորա մէջ ներքին պատերազմ կը «սկսի, պատերազմ զգայմունքի և գիտակ«ցութեան, բաժանումն մարդոյ մէջ առհա«սարակ մարդկային զգայմանց և մարդկային «գիտակցութեանց: Բայց որովհետև զգաց«մունքը միշտ առաջնորդում է (руководить) «գիտակցութեանը, այդ պատճառաւ այդպիսի «մարդը ենթարկվում է զգայմունքին . . . «հարկաւոր է զօրեղ բնաւորութիւն, սո«վոր սաստիկ տանջանքներին, որ նորա գի«տակցութիւնն էլ առաջնորդի զգայմունե«քին»:

Ուրեմն տեսանք, թէ որքան նշանակութիւն ունի ընտանեկան վատ դաստիարակութեան բացատական կողմը, այժմ տեսնենք, թէ ընտանեկան կեանքը որքան նպաստաւոր է դպրոցներից: Այս խօսքերը ևս քաղված մի գրքից (2), որ առած էր Պեստալոցցիի շարադրութիւնից I. Հ. XII. Cristipli und Else).

Պեստալոցցին այստեղ խօսակցութեան ձևով մի պարոնի և նորա աշխատաւորի (ծառայի) հետ յայտնում է իւր մտքերը կրիստօֆի (պարոնի անունը) բերանով: Ես քեզ լաւ չեմ հասկանում, էօստ (ծառայի անունը):

—«Էօստը պատասխանում է, որ կը նշանակի Պեստալոցցին է իւր մտքերն յայտնում»: Տեսնում ես տէր, լաւ դաստիարակութեան ժամանակ միշտ մտքումն ունին, որ երեխայն կրթուած լինի ի-ր պանը հասոր: Նա պէտք է կարողանայ անել այն բանները, որոնք տալիս են նորան նորա ամենօրեայ կերակուրը և հանգստութիւնը և ինձ թվում է, որ այդ բանը աւելի շուտ և աւելի հեշտ կը սորվացնեն նորան նորա հայրը և մայրը, քան թէ ուսուցիչը դպրոցում: Ես տեսնում եմ, որ տունը իւր բոլոր հնարքներով աւելի յարմարացրած է այդ բանի համար, քան թէ այդ վերաբերութեամբ դասարկ դպրոցը: Ուսուցիչները, արդարև, յաճախ ասում են դեղեցիկ և ազնիւ մտքեր,

(1) Дѣтск. садъ 1868 г. Янв. Фев. ст. 51.

Ա՛հ այդ շշմեցուցիչ օրերը, որ հանկարծ ընդհատեցին մեր ուրախ ու անհոգ կյանքը, ինչպես ամպրոպը՝ հանդարտ ու պայծառ երկնքի վրա։ Ամեն ինչ կարծես մի ակնթարթում փոխվեց, ամեն ինչ ստացավ նոր իմաստ, նոր գույներ, նոր ձայներ։ Ամբողջ ամառ մենք ապրում էինք ինչ-որ հրաշալի, անհոգ երազի մեջ, որտեղ ամեն օր նոր ուրախություն էր բերում, ամեն գիշեր՝ նոր հանգիստ քուն։ Եվ հանկարծ այդ երազը դաժանորեն ընդհատվեց, ու մենք հայտնվեցինք մի ահավոր իրականության մեջ, որտեղ ամեն ինչ փոխվել էր անճանաչելի։

Ես հիշում եմ այդ առավոտը, երբ հայրս, որ միշտ շատ կանուխ էր արթնանում, ինչ-որ տարօրինակ ձայնով կանչեց ինձ։ Ես վազեցի նրա մոտ և տեսա, որ նա կանգնած է պատուհանի առաջ, ձեռքերը խաչաձև դրած կրծքին, և նայում է դեպի փողոցը։ Նրա դեմքը այնքան լուրջ էր, որ ես ակամայից էլ լրջացա և հարցրի. «Ի՞նչ է պատահել, հայրիկ»։ Նա ինձ չպատասխանեց, միայն ձեռքով ցույց տվեց, որ մոտենամ։ Ես մոտեցա և տեսա, որ փողոցում մարդիկ խմբերով կանգնած են և խոսում են մի բանի մասին, որ ես դեռ չէի հասկանում։ Նրանց դեմքերը նույնպես լուրջ էին, և ոչ ոք չէր ծիծաղում։

Հետո հայրս ինձ ասաց, որ պատերազմ է սկսվել։ Ես չգիտեի, թե ինչ է նշանակում այդ բառը, բայց զգացի, որ դա ինչ-որ սարսափելի բան է, որ մեր ամբողջ կյանքը պիտի փոխվի։ Եվ իրոք, այդ օրվանից ամեն ինչ փոխվեց։ Մեր տունը, որ միշտ լի էր ծիծաղով և երգով, դարձավ լուռ և տխուր։ Հայրս ամեն առավոտ վաղ էր գնում և ուշ գիշեր վերադառնում, իսկ մայրս ամբողջ օրը նստած էր սեղանի մոտ և գրում էր նամակներ։ Ես հասկացա, որ նա գրում է ռազմաճակատ, որտեղ գնացել էր իմ եղբայրը։

Իմ եղբայրը տասնութ տարեկան էր, երբ սկսվեց պատերազմը։ Նա միշտ երազում էր զինվոր դառնալ և պատերազմել հանուն հայրենիքի։ Երբ նա հագավ զինվորական համազգեստը, ես նրան չճանաչեցի։ Նա այլևս իմ ծիծաղկոտ, հոգատար եղբայրը չէր, այլ լուրջ, խիստ տեսքով մի մարդ, որի ուսերին ծանր պատասխանատվություն էր դրված։ Նա ինձ խոստացավ, որ կգրի ամեն շաբաթ, և իրոք, նա պահեց իր խոսքը։ Նրա նամակները մեզ համար մեծ ուրախություն էին, բայց միևնույն ժամանակ նաև մեծ տագնապ, քանի որ յուրաքանչյուր նամակ կարող էր լինել վերջինը։

Ես հիշում եմ մի ձմեռային երեկո, երբ մենք բոլորս հավաքված էինք ճրագի շուրջ, և հայրս կարդում էր եղբորս նամակը։ Նա գրում էր, որ իրենց գունդը մեծ մարտերի մեջ է մտել, որ շատ ընկերներ են զոհվել, և որ ինքն էլ մի անգամ մահվան եզրին է եղել։ Մայրս լաց էր լինում, իսկ հայրս, թեև ձայնը չէր դողում, բայց ես տեսնում էի, որ նրա ձեռքերը դողում են։ Այդ գիշեր ես առաջին անգամ զգացի, որ պատերազմը ոչ միայն հեռու ճակատներում է, այլ նաև մեր տան մեջ, մեր սրտերում։

Ամառը եկավ, բայց մեր կյանքում այլևս ամառ չկար։ Մենք սկսեցինք հագնել սև հագուստ, և մեր տունը դարձավ լուռ ու տխուր։ Ես այլևս չէի վազվզում բակում, չէի խաղում ընկերներիս հետ։ Ամեն առավոտ ես արթնանում էի այն մտքով, որ այսօր գուցե նամակ չգա, և այդ մտքից սիրտս սեղմվում էր։ Երբ փոստատարը գալիս էր, ես վազում էի նրան ընդառաջ, և եթե նա ինձ նամակ չէր տալիս, ես գլուխս կախ տանում էի տուն։

Մի անգամ ձմռան ցուրտ օրերից մեկում մեր դուռը թակեցին։ Ես բացեցի, և տեսա, որ շեմքին կանգնած է մի զինվոր, որի դեմքը ես չճանաչեցի։ Նա հարցրեց, թե այստեղ է արդյոք ապրում Գրիգոր Մելիքյանը, և ես պատասխանեցի, որ այո, ես նրա որդին եմ։ Զինվորը ինձ մի փոքրիկ ծրար մեկնեց, և ես հասկացա, որ դա եղբորս նամակն է։ Ես վազեցի ներս, և հայրս, տեսնելով ծրարը, դողդողացող ձեռքերով պատռեց այն։ Նամակը գրված էր մատիտով, և գրելաձևը այնքան տարբեր էր եղբորս սովորական ձեռագրից, որ հայրս անմիջապես հասկացավ, որ ինչ-որ բան պատահել է։

Նամակում գրված էր, որ եղբայրս վիրավորվել է և գտնվում է հիվանդանոցում։ Նա գրում էր, որ ոտքը ծանր է վնասվել, և որ բժիշկները չգիտեն, թե կկարողանա արդյոք նորից քայլել։ Մայրս լաց եղավ, իսկ հայրս երկար ժամանակ լուռ նայում էր պատին կախված մեր ընտանեկան լուսանկարին, որտեղ եղբայրս դեռ տասնհինգ տարեկան էր և ժպտում էր ուրախ, անհոգ ժպիտով։

Այդ գիշեր ես երազում տեսա, որ եղբայրս վերադարձել է տուն, և որ մենք նորից միասին ենք։ Բայց առավոտյան, երբ արթնացա, իրականությունը դարձյալ դաժան էր։ Եղբայրս հեռու էր, և մենք չգիտեինք, թե երբ կտեսնենք նրան։ Ես հասկացա, որ պատերազմը ոչ միայն խլում է մարդկանց կյանքը, այլև խլում է մարդկանց երջանկությունը, ուրախությունը, հանգիստը։ Եվ ես ատեցի պատերազմը այնպիսի ուժգնությամբ, որ միայն մանուկները կարող են ատել։

Ամառը եկավ, ծիլերը դուրս եկան, ծաղիկները բացվեցին, բայց մեր տունը մնաց նույն տխուր տունը։ Մենք սպասում էինք նամակների, ամեն օր, ամեն ժամ։ Երբ նամակ չէր գալիս երկար ժամանակ, մայրս սկսում էր անհանգստանալ, իսկ հայրս ավելի էր լռում, ավելի էր մռայլվում։ Ես սովորեցի կարդալ նրանց դեմքերից, թե ինչ է պատահել, նույնիսկ առանց նամակը կարդալու։

Մի անգամ, երբ նամակ երկար ժամանակ չէր գալիս, հայրս որոշեց գնալ ռազմաճակատ և տեսնել եղբորս։ Նա գնաց, և մենք մնացինք տանը՝ ես, մայրս և տատիկս։ Այդ օրերին տատիկս ինձ համար դարձավ ամենամեծ մխիթարությունը։ Նա պատմում էր հին հեքիաթներ, երգում էր հին երգեր, և ես լսում էի նրան՝ մոռանալով ամեն ինչ։ Նա ասում էր, որ պատերազմը մի օր անպայման կավարտվի, որ չարը միշտ պարտվում է բարուն, և որ մենք նորից կապրենք խաղաղ կյանքով։ Ես հավատում էի նրան, որովհետև ուզում էի հավատալ։

Հայրս վերադարձավ մեկ ամիս անց։ Նա եղբորս հետ չէր եկել։ Եղբայրս մնացել էր հիվանդանոցում, և հայրս ասաց, որ նա շուտով կգա, որ ոտքը լավանում է, և որ նա ուղղակի ուզում է մեզ անակնկալ անել։ Մենք սպասեցինք, հաշվեցինք օրերը, ժամերը, և երբ վերջապես եղբայրս եկավ, ես նրան գրեթե չճանաչեցի։ Նա նիհար էր, գունատ, և ոտքը կաղում էր։ Բայց նա ժպտում էր, և մենք գիտեինք, որ կենդանի է, որ տուն է եկել, և որ մեր ամբողջ ընտանիքը նորից միասին է։

Այդ երեկո մենք երկար նստեցինք սեղանի շուրջ, և եղբայրս պատմեց մեզ իր մասին, իր ընկերների մասին, և այն մասին, թե ինչպես էր ապրում խրամատներում։ Մենք լսում էինք նրան, և ոչ ոք չէր ընդհատում։ Ես հասկացա, որ նա փոխվել է, որ նա այլևս այն տղան չէ, որ գնաց պատերազմ, բայց նա մեր եղբայրն է, և մենք նորից միասին ենք։ Եվ դա ամենակարևորն էր։

կամ նոցա մօտով անցկենալուց և այլն: Եթէ այս բաները լինում է, ուրեմն պէտք է ուշադրութիւն դցել և ծառաների վերայ, որ նոցա ազդեցութիւնը միասական չը լինի երեխանց վերայ և հակառակ ծնօղաց յանկութիւններին: Այստեղ ես շատերից մի օրինակ կը պատմեմ, որին ես ինքս ականատես եմ եղել՝ որ պարզ ցոյց տամ, թէ որքան միասական է ծառաների ազդեցութիւնը երեխանց վերայ և թէ որքան մեր ծնօղները պէտք է աշխատեն ուշադրութիւն դցել (ընդօծիններին) փոքրաւորների վերայ:

Մի իմ ծանօթ տանը կային չորս երեխաներ, որոնցից երկուսը աղաներ էին, մինը 12, միւսը 10 տարեկան. իսկ երկուսն աղջկներ՝ մինը 8 տարեկան, միւսը ծծից նոր կտրած: Այդ ծծի երեխայի համար վարձել էին 17 տարեկան գեղեցիկ դայեակ (няня): Տանը կային մի լակէյ (պաշտակ) և մին էլ պօվար (խոհարար): Երեխաների համար հրաւիրել էին, յայտնի՝ բան է լաւ գումար վճարելով, մի դաստիարակ (гувернеръ): Բացի այս դաստիարակը այն տանը կար և մի պարոն, որ ուսուցչութեամբ պարապում էր և ինքը իւրեան համարում շատ մեծ (педагогъ) մանկավարժ: Ուրեմն մի տանը կային երկու մանկավարժներ, երեք երեխաների համար, սորանից յետոյ պէտք է կարծէինք, որ այդ մանկավարժները բայի լաւ ուսուցանելը պէտք է լաւ հասկայրել էին և հետայրել ամենայն վատ ազդեցութիւն ունեցող պատճառները երեխանց վերայ: Այդ մանկավարժները կարծում էին, որ իւրեանց աշխատանքից յետոյ ամենայն բան կատարելապէս է գնում: Եւ նոցա զարմանքը մեծ էր, երբ որ ես նոցա ուշադրութիւնը դարձրի երեխանց մի քանի պակասութիւնների վերայ, որոնց պատճառը նոքա ոչ թէ չէին հասկանում, այլ չէին ուզում անգամ հաւատալ ինձ:

Մանկավարժներից մինը ինձ ասում էր՝ «ես զարմանում եմ, թէ երեխայքը ո՞ւմ նից կարող էին վատ ուշադրութիւն (յիշողքներ) սովորել: Ես այդ ուշադրութիւններին վերայ հասայ ասում էր մանկավարժը, երբ որ երեխայքը միմեանց հետ մի անգամ կռվելիս ասում էին միմեանցը: Ամենայն աշխատութիւն չենք խնայում, որ երեխաները հետու լինին վատ ազդեցութիւնից, երկուսս (մանկավարժներս) ամենայն ջանքը և դիտութիւն՝ի գործ ենք դնում կատարելապէս դաստիարակելու. . . բայց երեխաները ուշադրութիւն և վատ բառեր էլի լսում են. . . .:

Մի երեկոյ ես այդ տանն էի, երեխաներից մինը (մեծը) մտել էր խոհանոց, որտեղ երկու ծառաները (լակէյը և պօվարը) այն դայեակի (няня ի) հետ ափեղ—ցփեղ խօսում էին և բարձր ձայնով ծիծաղում: Ես ասացի մանկավարժին, որ նա զգուշութեամբ գնայ խոհանոց և տեսնէ, թէ ի՞նչ կայ այնտեղ: Նա գնայ և դուան մօտ կանգնելով լսեց բոլոր կեղտոտ խօսակցութիւնները, որոնք լսում էր և մեծ երեխայն: Մանկավարժը սաստիկ վրդովվելով և չը կարողանալով իւրեան պահել, սկսեց երեխային ծեծել: Երեխան վազեց դէպի միւս սենեակները օգնութիւն խնդրելու և մտաւ այն սենեակը, որտեղ ես էի:

Մի քանի րոպէ անցնելուց յետոյ, ես ասացի մանկավարժին. տեսա՞ք, պարոն, որ ես ձեզ ասում էի, թէ ծառաները կը լինին այդ ուշունցները սովրացնողները. և թէ երեխաները, որ սովորում են դնալ շատ շատ խոհանոց, այն է պատճառը, որ այնտեղ ընդօծինները (ծառաները) ափեղ—ցփեղ խօսելով զուարճացնում են երեխային աւելի, քան թէ դուք երկուսդ ձեր դիտութիւնները և հոգեբանութեամբ սովրացնելով: Իսկ դուք, իմ ասածներիս վերայ ոչ թէ ուշադրութիւն չէիք դարձնում, այլ մինչև անգամ նեղանում էիք իմ պարզ ասած խօսքերից: Ինձ պատասխանում էիք, թէ դինչպէս կարող են ծառաները երեխանցը ուշունցներ սովրացնել, երբ որ ես նոցա սաստկապէս պատուիրել եմ այդ բաներից հեռու կենալ»:

Յօդուածիս վերջը թողի մի բանի վերայ պատմելս, որ ամենանշանաւորն է և որ աւելի ազդեցութիւն ունենայ կարդացողների վերայ, այն է, մեր ընտանեկան կեանքում մի բան շատ է պատահում, որը ամենից աւելի ձեռս է բերում երեխաներին և որի վերայ աւելի պէտք է ուշադրութիւն դցեն մեր ծնօղները: Այդ բանը է այն յարաբերութիւնը, որ ունենում են ամուսինները դէպի իւրեանց կոլակիցները (կնիկները): Ես այստեղ կը բերեմ Ռուսաց մանկավարժական «Дѣтскій садъ» օրագրից մի օրինակ, որտեղից պարզ երևում է, թէ երբ մարդը և կինը անդադար միմեանց հետ կռվում են, միշտ անբաւականութիւններ է պատահում նոցա մէջ. այն ժամանակը որքան ձեռնտակար և կորստաբեր է ազդում այս երեխանց վերայ:

Ահա, թէ ի՞նչ է ասում մի Ռուս տիկին լարիոնա Յեգորիկովա անունով իւր յօդուածում «Երեխայի առաջին և ամենամեծ տարաբաղդութիւնը իւր ծնօղների մէջ եղած երկպառակութիւնն (разладъ) է, և պէտք է խոստովանենք, որ մեր ընտանեկան կեանքի ստորին աստիճանի զարգացման մէջ լինելով և տարաբաղդ ամուսնութիւնների շատ պատահելով, այդ տարաբաղդութիւնը մեր մէջ ամենահասարակ բանն է համարված: Եթէ ուշադրութիւն չը դնենք նորան վերայ, թէ մարդիկը միշտ զրդռվում են անդադար միմեանց դիպչելով, չեն կարողանում պահպանել իւրեանց հոգւոյ հաւասար հանդարտութիւնը և հանգստութիւնը, որը շատ հարկաւոր է երեխանց հետ վարվելիս և շատ անգամ անմտադրութեամբ լինում են պահանջող, անհամբեր, բիրտ (грубый) դէպի երեխաները. և մինչև անգամ, եթէ ծնօղները և հասակաւորները իւրեանց վերայ մեծ ուշադրութիւն դցեն, աշխատեն կշռել իւրեանց ամէն մի խօսքը, որը պէտք է ասեն երեխային, այսու ամենայնիւ, եթէ ամուսնու և կողակցի մէջ կռիւ է լինում, կամ քնթռվ են լինում նոքա միմեանց վերայ, այն ժամանակը այդ ամէնը բոլորովին կորստաբեր կերպով է ազդում երեխանց վերայ. երեխանցը հարկաւոր է պայծառ, ուրախ ընկերութիւն (среда), ինչպէս նորածողջոյ բոյսին հարկաւոր է տաքութիւն և արեգակ, երեխանց համար ծանր է, նոքա տանջվում են իւրեանց շրջապատողների տանջանքներով և այս ժամանակ նոքա իրանց սաստիկ անբաղդ են զգում: Ցմարդաբար (грубо) սխալվում են նոքա, որոնք կարծում են, թէ երեխաները կարող են զգալ միայն այն, ինչ որ ուղղակի նոցա է վերաբերվում. և իրը թէ միայն նոցա հետ քաղցր վար-

(*) Дѣтск. садъ Мартъ и Апрѣлъ, 1868, стр. 152.

վին, այդքանը բաւական կլինի և նոցա փոյթը չէ, թէ ինչէ պատահում նոցա չորս կողմը: Սորան պատասխան տալու համար փոխանակ երկար ու բարակ փաստաբանութիւնները անելու, ես կը պատմեմ մի անդք կեանքից վեր առած, որ այդ հարցին ամենալաւ պատասխանը կը լինի: Մենք ճանապարհում էինք մի աղջկան, որին իւրեանց տանը սիրում էին և երես տալի. հայրը և մայրը նորան պաշտում էին և միայն այդ մի բանում նոքա համաձայն էին: Իսկ մնացեալ միւս գործերում միմեանց զզղզում էին, որպէս ամենաչար թշնամիներ: Այդ աղջիկը շատ շատ վաղ սկսեց խորը տանջվիլ իւր ընտանիքի մէջ եղած տարաձայնութիւնից. նա 7 տարեկանից սկսում է դիշերները զարթել և լաց լինել. մեծ եռանդով ապօթում է, որ Աստուած սորվացնէ իր հօրն և մօրը՝ ապրել խաղաղութեամբ և անկռիւ, կամ թէ իւրան տանէ երկինքը իր մօտ, որտեղ ոչ ոք չէ կռւում, ոչ ոք չէ վիրաւորում և որտեղ ամենեքեանքը ապրում են հաշտ և սիրում են միմեանց: Վերջապէս աղջիկը բարկութենից և իւր կամուաճքը եղծանելուց տխրացաւ. բժիշկը նշանակեց մի խառնուրդ և պարմանուհի-երեխայի-նեանդային շուտապրդռութեանը վերայ, երբ որ նորա արտաքին կազմուածքին նայելով այդ չը պէտք է եղել էր և այդպիսով ոչ ոք չէր կասկածում երեխայի հիւանդութեան իսկական պատճառի մասին: Տարիները անցնում էին տանելով իւրեանց հետ աւելի և աւելի երեխայի կենդանի այժերը՝ նա աւելի և աւելի ընտելանում էր մահուան գաղափարի հետ և այժմ 15 տարեկան հասակում նա նման չէ ջահել օրիորդին, որը պատրաստ է լինում մանել կեանքի մէջ. միշտ դունաթափ, տխուր և խորը մտածման մէջ, նա չէ սիրում կեանքը, ոչինչ չէ հետաքրքրում նորան, նա ամբողջ ժամերով նստում է պատուհանի առաջ, հոդոց քաշելով նայում երկնքին և արտասունք թափելով մտածում է (мечтаетъ) թէ «ես երկնքումն ինչ լաւ պէտք է լինի»: Միւսները, աւելի աշխոյժ բնութիւն ունեցողները այդպիսի դրութեան ժամանակ, նորա տարիներում, մինչև անդամ նորանից ջհհելները, աւելի հիմնաւոր հնարքներին են դիմում՝ խմում են քացախ, թանաք, դուրս են վազում բակի ոտներով ձիւնի վերայ. քրտնած և յոգնած ժամանակ կուլեն տալի սառուցի կտորներ կամ ձիւնով պատում են իւրեանց և այդ գործելուց յետոյ առողջութիւնն և կեանքն են զոհ բերում:

Սորապէս պարզ և համոզեցուցիչ փաստը բաւական է կարդացողի համար, վերջապէս իւրաքանչիւր կարդացող թող ինքը մտաբերի իւր ընտանիքի անդամների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները հօր յարաբերութիւնը դէպի իւր մայրը կամ իւր քոյրը, դէպի ինքն և այլն և այլն: Յայտնի բան է, սորանից յետոյ կարդացողը կը համոզուի թէ ընտանիքի անդամները պէտք է ամենասիրալիր, բարեկամական, անկեղծ քրիստոնեավայել լինին և եթէ այժմեան մեր հասակաւորները չեն կարողանալ իւրեանցը կատարել, իւրեանց սովորութիւնները փոխել, գոնէ նորերը, երիտասարդները և օրիորդները, որոնք ապագայ ընտանեաց տէր պէտք է դառնան, անշուշտ մեծ ուշադրութիւն պէտք է գցեն այս խնդրի վերայ, որից կախուած է թէ իւրեանց և թէ նոցա ընտանեկի բաղդաւորութիւնը, այո:

Զաւուքիա Գրիգորեանց:

Մի մարդ պատահեցաւ իր ծանօթին, որնոր սաստիկ ծեծում էր մի երեխայի: Ինչո՞ւ ես ծեծում խեղճ երեխային. նա քո՞ն է: «Չէ պատասխանեց ծանօթը, նա իմ եղբօր որդին է, որ մի քանի շաբաթով եկել է ինձ մօտ բաւականութեան և զուարճութեան համար:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

—

Ես ուսուցչուհս կրօնի և եկեղեցական պատմութեան Թիֆլիզում Ներսիսեան ազգային—հոգևոր դպրոցում, աշխատասիրեցի Դասական եկեղեցական պատմութիւն Հայոց, Յունաց, Ռուսաց, Լատինաց և Բողոքական եկեղեցեաց ըստ ներքին և արտաքին հանգամանաց, բաժանելով երեք հատոր, որի համար աշխատել եմ վեց տարի, և այժմ ստանալով թոյլատուութիւն տպագրութեան. կամենում եմ տպագրել տալ ի վայելումն ուսումնատենչ ազգայնոցս, ուստի տպելու ծախքի համար, խնդրում եմ բաժանորդ գրուիլ, գնահատելով երեք հատորը այժմեան տորագրոների համար 4 մանէթ, իսկ տպագրելից յետ կաւելանայ գինը: Ցոյս ունիմ, որ Հայոց ուսումնարանները կ'օգնեն այս գործին գնելով յառաջադոյն հարկաւորեալ քանակութիւնը ուսումնարանաց համար. և գինը կանխիկ կուղարկեն Վրաստանի և Խմբկեթի կոնսիստօրիայն Հայոց և կ'ստանան հետզհետէ տպագրած հատորները. նմանապէս և հոգևորականութիւնը չի խնայել անշուշտ իր օժանդակութիւնը այս օգտաւէտ գործքին, որովհետև նորա իսկական պարտն է կարդալ և գիտենալ եկեղեցական պատմութիւնը, և ուսուցանել ժողովրդեան: Մեր ազգի մէջ այս երկասիրութիւնը անօրինակ է, ուստի և յոյս ունիմ, որ մերայինք, ինչպէս հարկն է, կ'գնահատեն այս մեր աշխատանքը:

Սբէֆանոս ուաք Յահանայ Մանդինեանց:

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
ի տպարանի Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ընկ.
ի տան. Ձիմախեանց.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 31 МАЯ 1869 Г.
ТИФЛИСЪ.